3936

91

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԳՐՈՂՆԵՐԻ ԱՉՔԵՐՈՎ

ԵՐԵՎԱՆ — 1983

016
Պ-30

© National Library of Armenia OCR by Portmind

016
Պ-30

2 SEP 20

ՀՍՍՀ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ

---

ԱԼ.ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ինֆորմացիայի և մատենագիտության բաժին

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԳՐՈՂՆԵՐԻ ԱՉՔԵՐՈՎ

## Զրույցներ գրքերի մասին

Ե Ր Ե Վ Ա Ն - 1 9 8 3

© National Library of Armenia

18.07.2013

016:8
Ի- 61

Կազմող՝ Մ.Ն.Ներսիսյան
Խմբագիր՝ Մ.Ա.Բաբայան
Составитель: М.Н.Нерсесян
Редактор: М.А.Бабаян

МИНИСТЕРСТВО КУЛЬТУРЫ АРМЯНСКОЙ ССР

Государственная библиотека Арм ССР
им. А.Ф. Мясникяна

Информационно - библиографический
отдел

История глазами писателей

Беседы о книгах

Ереван - 1983

© Հայկ. ՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան պետական գրադարան 1983

Հանրապետական գրադարան
Гос Библиотека
Арм ССР
им. А. Мясникяна
Մյասնիկյանի անվան

1790-83

© National Library of Armenia

Հարգելի ընթերցող.

,,Պատմությունը գրողների աչքերով,, սերիայով այսուհետև մենք հրատարակելու ենք ,,Զրույցներ գրքերի մասին,,մատենաշարը,որը նպատակ ունի օգնելու սկսնակ ընթերցողին գրականություն ընտրելիս:

Պատմական թեման գրողը միշտ դիտում է արդիականության լույսի տակ՝ այսօրվա հուզող հարցերին պատասխան տալու համար: Եվ պատահական չէ,որ պատմավեպին դիմեցին Րաֆֆին,Ծերենցը,Մուրացանը: Նրանք իրենց վեպերում արծարծում էին հայրենասիրության,ազգային ազատագրական պայքարի և ազգային անկախության հարցերը, որոնք խիստ արդիական էին:

Սովետահայ գրականության մեջ պատմավեպի լավագույն օրինակներն են Դ.Դեմիրճյանի ,,Վարդանանքը,, , Ստ.Զորյանի ,,Պապ թագավորը,, և այլ երկեր:

Պատմավեպում բոլոր հերոսները չէ,որ իրական անձնավորություններ են, և բոլոր դեպքերը չեն, որ նույնությամբ վերցվում են պատմությունից:Գրողն իր երևակայության միջոցով ստեղծում է նաև ոչ պատմական հերոսներ, որոնք պետք է մտածեն և գործեն,ելնելով նկարագրվող ժամանակաշրջանի սոցիալ-հոգեբանական մթնոլորտից:

Ժամանակակից սովետահայ գրողները ևս ստեղծում են պատմական թեմատիկայով բազմաթիվ գործեր՝ հայրենասիրական ավյունն ու անցյալի ավանդույթները նորովի լուսաբանելու,այսօրվա հուզող հարցերին պատասխան տալու մղումով:

Ստորև Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում վերջին տարիներին լույս տեսած մի քանի գրքեր,որոնց թեման Հայաստանի պատմության այս կամ այն շրջանի նշանակալի իրադարձություններն են գեղարվեստական մշակման ենթարկված: Հուսով ենք,որ դուք մեծ հետաքրքրությամբ կընթերցեք դրանք: Մենք պարբերաբար ձեզ կներկայացնենք այս և ուրիշ թեմաներով մատենաշարեր:

Հետևեցեք մեր հրատարակություններին,որոնք դուք կգտնեք գրադարաններում:

ԳՐԻԳՈՐՅԱՆ Վ. ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՎԵՐԱԴԱՐՁ: Պատմական վիպակ.-Եր.: Սովետ.գրող,1981.-172 էջ.

Երիտասարդ արձակագրի այս վիպակը ,,ԼՈՒՅՍԻ ԱՄՐՈՑ,, վերնագրով լույս է տեսել նաև ,,Սովետական գրականություն,, 1980, նո.8-ում: Նրա պատմական թեման աղանդավորական քողի տակ հանդես եկած միջնադարյան խոշորագույն սոցիալական շարժման՝ պավլիկյանության ձևավորումն է և հերոսական պայքարը Բյուզանդական կայսրության, եկեղեցու և ֆեոդալների դեմ:

Բյուզանդական կայսեր հրամանով զորավար Սիմեոնը մեկնում է Հայաստան ,,արմատախիլ անելու պիղծ աղանդը,,: Նրան հայտնի է դառնում իր կյանքի առեղծվածը. ինքը ազգությամբ հայ է, իր հայրը Թեոդորոս Ռշտունի թագավորի զինվորներից էր, որը ապստամբել էր Բյուզանդական տիրապետության դեմ և անհետ կորել: Զոհվել էր նաև մայրը: Որբ մնացած մանուկին որդեգրել էր հույն պալատական Դոմետիանոս Ջանիոսը: Եվ ահա նա՝ այդ որդեգիրը, որպես կայսրության զորավար, եկել է իր հայրենի երկիրը՝ ոչնչացնելու ապստամբներին, որոնց ղեկավարը՝ Կոստանդինը, իր հարազատ հայրն է:

Սիմեոնի զորքերը պաշարում են Կիբոսսա պավլիկյանների ամրոցը: Նորքանվում է բերդը, գերեվարվում է Կոստանդինն իր աշակերտների հետ և մահապատժի ենթարկվում:

Նործանելով Կիբոսսան և վերադառնալով կայսերական մայրաքաղաք, Սիմեոնը ապրում է հոգեկան աննախընթաց վերակերպավորում. նա վերաիմաստավորում է իր անձը, իր արարքներն ու պատկերացումները: Խորը քննելով և ուսումնասիրելով Կոստանդինի ձեռագրերը նոր աղանդի էության մասին, նրա միտքը լուսավորվում է նոր ճշմարտություններով, հոգին լցվում նոր ձգտումներով,և խորհրդավոր անհետացումից հետո նա հայտնվում է որպես պավլիկյանների վարդապետության մի նոր



քարոզիչ Տիտոս անունով, վերականգնում է աղանդավորների ամրոցը, և ինքն է կանգնում բյուզանդական կայսրության ուժին հանդիման:

Այսպես է զարգանում վիպակի սյուժեն, որի ընթացքում հանդես են գալիս մի շարք հերոսներ իրենց բարդ ճակատագրերով, տանջալից ապրումներով, կորուստներով և գյուտերով, որոնք հոգեբանական-փիլիսոփայական ինքնավերլուծությամբ բացահայտում են սոցիալական ու մարդկային դրամայի բախումները:

ԽԱՉԱՏՐՅԱՆ Հ. ԱՐՏԱՇԵՍ: Պատմավեպ.-Եր.: Սովետ.գրող,1980.-476 էջ.

Հ.Խաչատրյանի նախասիրած ժանրը պատմավեպն է: Ընթերցողին ծանոթ են նրա ,,ԷՐԵԲՈՒՆԻ,,/1968/, ,,ՏԻԳՐԱՆ ՄԵԾ,,/1972/, ,,ԱՐՏԱՎԱԶԴ,,/1975/ վեպերը:

Հանձնարարվող պատմավեպի համար իբրև սյուժե գրողն օգտագործել է մ.թ.ա. 2-րդ դարի հեթանոսական Հայաստանի պատմական անցուդարձերը: Պատմական դեպքերի բերումով ստեղծվել է չորսմասյա մի Հայաստան:Մեծ Հայքի թագավոր Արտաշեսը մտածում է վերամիավորել մասնատված երկիրը և ստեղծել մեկ միասնական հզոր պետություն: Այս հիմնական սյուժետային գծին միահյուսվում են ուրիշ գծեր՝ Արտաշեսի և Սաթենիկի սիրո, Հաննիբալի և Անարայի փորձություններով լի կյանքի և մահվան, Սաթենիկի նկատմամբ Մեծ նահապետի մտադրությունների,Թագաժառանգ Արտավազդի զահացենչ և հայրադավ ձգտումների պատմությունները,որոնք ավելի դինամիկ և հետաքրքիր են դարձնում գործողությունները:

Արտաշես արքան վեհ, եպիքական ու զորեղ բնավորություն է,բարի ու արդարամիտ: Նա մարմնավորում է հայ ժողովրդի ազգային և ազատասիրական ձգտումները, հայրենասիրությունն ու մարդասիրությունը:

Սաթենիկը՝ մեր հայկական առասպելի հերոսուհին, սիրո,

© National Library of Armenia

հավատարմության, մայրության մարմնավորումն է:

Զորավարները Սմբատն ու Մաղխազը հայոց երկրի զորական ուժի ներկայացուցիչներն են, օժտված երկաթյա կամքով, քաջությամբ, դիվանագիտական հեռատեսությամբ, վերլուծական մտքով:

Խոհարար Տուրը՝ հայոց բնաշխարհի մեծ գիտակ և ստորացումներից ու հալածանքներից դեռևս չթառամած, Տողը՝ նոր կազմավորվող մշակույթի նվիրյալ, սարտիզյան Տամբուկը, քաջ սպարապետ Հարնանը և ուրիշ կերպարներ հարստացնում են վեպը, նրան տալիս ...ական հնչողություն:

Խաչատրյանի այս պատմավեպը ներծծված է խոր հայրենասիրության, ազգային նկարագրի ձևավորման և ինքնահաստատման, մարդասիրության, չարի ու չարագործության դեմ պայքարի, ժողովրդական խաղաղ գործունեության, ստեղծագործ աշխատանքի ներբողանքի գաղափարներով, որոնցով և այն դառնում է արդիական, մեր ժամանակին համահունչ:

ԴԱՇՏԵՆՑ Խ. ՌԱՆՉՊԱՐՆԵՐԻ ԿԱՆՉԸ. Վեպ հայ շինականների կյանքից./Խմբ. Ս. Դանիելյան.-Եր.: Սովետ. գրող, 1979.-523 էջ.

Խաչիկ Դաշտենցը ամենահայրենական տարերքի և շնչի գրող է: Դրա ապացույցն է տարիներ առաջ լույս տեսած ,,ԽՈԴԵԴԱՆ,, վեպը և այժմ շրջանառության մեջ դրվող և մեծ ճանաչողական ու հետաքրքրություն ներկայացնող ,,Ռանչպարների կանչը,, վեպը, որը պատմում է 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ ազգային ազատագրական շարժումների այն հերոսների մասին, որոնք պատմությանը հայտնի են ,,հայդուկներ,,/ֆիդայիներ/ անունով:

Հայոց դաշտանքի պատանիներից մեկը՝ ,,Մախլուտո,, մականունով, ռանչպարների կանչով դառնում է ազգային շարժման զինվոր և պատմում է իր կյանքի դրվագները:



Հայդուկները, որոնք գեղջուկներ էին-ռանչպարներ, ոտքի էին ելել իրենց իրավունքների պաշտպանության համար՝ ընդդեմ թուրքական սաստկացող բռնությունների:

Մախլուտոյի պատումի մեջ նրա կողքին են այդ շարժման առասպելական հերոսները՝ Արաբո, Աղբյուր Սերոբ, Սոսե, Գևորգ Չաուշ, Անդրանիկ և ուրիշներ, որոնք երևում են հայրենասիրական խոր ապրումներով, քաղաքական բարձր ըմբռնումներով, ռամկական բնավորությամբ և ասպետական մարտերում: Մեր աչքի առջևով անցնում են նրանց հերոսական կռիվները, նրանց հուսախաբությունները ու կորուստները, նրանց կյանքը օտար ափերում, և նրանց բեկորների հանգրվանումը Սովետական Հայաստանի հողի վրա:

Վիպասքն ավարտվում է հուզիչ, սիմվոլիկ պատկերով, թե ինչպես հաջորդ սերունդների հիշողության մեջ նրանք մնում են որպես հեքիաթ և առասպել, երգ և ասք, որպես անանց մի լեգենդ: Վիպասքում առատորեն օգտագործված են բանահյուսական նյութեր՝ էպիքական և քնարական երգեր, ավանդույթներ և թևավոր խոսքեր, ինչպես և գիտական հիշատակարաններ, ազգագրական, տեղագրական հետազոտություններ և այլն:

ՔԵՅԹՈՒՆՑՅԱՆ Պ. ԱՐՇԱԿ ԵՐԿՐՈՐԴ./Պատմավեպ/.-Եր.:Սովետ.գրող, 1977.-531 էջ.

Պատմավեպի ժանրում Պ.Քեյթունցյանի այս գործը իր յուրահատուկ տեղն ունի: Գրողի խոսքերով ասած՝ ,,Խնդիրը պատմականության ճիշտ ըմբռնումն է և ոչ թե մանրամասներին գերի մնալը,,:

Վեպի նյութը Հայաստանի պատմության 4-րդ դարի դեպքերն են: Գործող անձերը ընթերցողին արդեն ծանոթ դեմքեր են մեր պատմիչների երկերից, պատմական ուսումնասիրություններից ու դասագրքե-

© National Library of Armenia

րից, նաև մի շարք պատմվածքներից /«Սամվել», «Պապ թագավոր»/: Վեպի առանցքը Արշակավան քաղաքի կառուցումն է: Կենտրոնախույս նախարարների և արտաքին ուժերի դեմ պայքարելու նպատակով Արշակ Երկրորդը քաղաքը բնակեցնում է տիրափախ շինականներով՝ ձգտելով ստեղծել ամուր հենարան և վստահելի ուժ: Ամուր պետականություն ստեղծելու ճանապարհին հայոց արքան ստիպված է լինում գործել իր մարդկային բնության հակառակ: Դեպի այս քաղաքն ունեցած իրենց վերաբերմունքով էլ որակավորվում են արքայի կողմնակիցներն ու հակառակորդները:

Արշակի մեջ հեղինակը տեսնում է ոչ միայն թագավորին, որը պետական գործիչ է, հայրենիքի բախտի ու ճակատագրի համար պատասխանատու, այլև մարդուն, իր թուլություններով ու թերություններով, իր հոգեբանությամբ, արարքների մեկնությամբ: Վեպում ստեղծված է նաև ժողովրդի հավաքական կերպարը, որը նրան տալիս է սոցիալական հնչողություն:

Գրողը հարազատ մնալով պատմականությանը՝ ստեղծել է իր հերոսներին, արտահայտել է պատմության իր ընկալումը, որովհետև նրան հուզել են ոչ թե դարերի վաղեմություն ունեցող պատմության, այլ իր ժամանակի պրոբլեմները և այդ պատճառով այն խիստ արդիական է:

Զեյթունցյանը այս նույն թեմայով գրել է նաև «ԱՎԵՐՎԱԾ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՍՊԵԼԸ» ողբերգությունը, ուր երկու մասանոց պիեսում խտացված է հանձնարարվող պատմվածքի դիպաշարը: Այն լույս է տեսել 1977 թ. «ԱՄԵՆԱՏԽՈՒՐ ՄԱՐԴԸ» պիեսների ժողովածուում, էջ 155-221.

Պատվեր նո. 24 Տպաքանակ՝ 300

---

Ռոտապրինտ՝ Ալ.Մյասնիկյանի անվան պետական գրադարանի
Հասցեն՝ Երևան, Տերյան-72:

ՀՀ Ազգային գրադարան
NL0132150

© National Library of Armenia

© National Library of Armenia